

---

## ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՆԸ ՀԱՅ-ԶԵԽԱԿԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

### ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

1993 թ. հունվարի 1-ին Զեխոսլովակիայի՝ Երկու մասի տրոհման հետևանքով ձևավորվում է Զեխիայի Հանրապետությունը: Արդեն հունվարի 27-ին չեխական կողմը պաշտոնական նոտայով դիմում է հայկական կողմին և առաջարկում 1993 թ. հունվարի 1-ը ընդունել որպես Հայաստանի և Զեխիայի հանրապետությունների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման օր և Հայաստանում նախկին Զեխոսլովակիայի Հանրապետության դեսպան Ռուդոլֆ Սլանսկուն ընդունել որպես Զեխիայի Հանրապետության դեսպան՝ նստավայրը՝ Մոսկվա: 1993 թ. փետրվարի 10-ին ՀՀ արտգործնախարարությունը վերբալ նոտա է հղում Մոսկվայում Զեխիայի դեսպանատուն, որով ճանաչում է նորանկախ Զեխիայի Հանրապետությունն ու դրական պատասխան տալիս չեխական կողմի վերոհիշյալ առաջարկություններին<sup>1</sup>:

Երկողմ հարաբերությունների հաստատումից ի վեր ձեռնարկվում են որոշակի քայլեր՝ փոխադարձաբար միմյանց ճանաչելու և միջպետական հարաբերությունների որոշ ոլորտների վերաբերյալ իրավապայմանագրային կապեր հաստատելու ուղղությամբ: Մասնավորապես, 1994 թ. հուլիսի 28-29-ը մեկօրյա այցով Երևան է ժամանում Մոսկվայում Զեխիայի Հանրապետության դեսպանության խորհրդական Միրոսլավ Բոլիցան՝ Երկողմ համագործակցության հեռանկարները քննարկելու համար: Յուրը հայտնում է, որ Զեխիան մտադիր է շուտով տարածքային հյուպատոսություն բացել Թբիլիսիում, որը պիտի սպասարկի նաև ՀՀ քաղաքացիներին: Բացի այդ, Բելիցան հետաքրքրվում է Պրահայում դեսպանություն կամ հյուպատոսություն ունենալու Երևանի մտադրության մասին՝ հավաստիացնելով, որ չեխական կողմը կողջունի նման քայլը և չի բացարի Երևանում դիվանագիտական ներկայացնելու հնարավորությունը<sup>2</sup>: Զեխիայում Հայաստանի դեսպանի հավատարմագրման հավանականությունների մասին մեկ անգամ ևս հետաքրքրվում է Հայաստանում Զեխիայի արտակարգ և լիազոր դեսպան Ռուդոլֆ Սլանսկին, ով երկողմ հարաբերությունների զարգացման հնարավորությունները քննարկե-

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն, պատմադիվանագիտական արխիվ (այսուհետ՝ ՀՀ ԱԳՆ, ՊԴԱ), գործ 223, թերթ 4:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 39:

լու նպատակով 1995 թ. նոյեմբերի 28-ին երկօրյա այցով ժամանել էր Երևան: Ըստ այդմ՝ ՀՅ փոխարտգործնախարար է. Զուլոյանը պատասխանում է, որ հայկական կողմը կքննարկի Ավստրիայում ՀՅ դեսպանին հաճատեղության կարգով Պրահայում հավատարմագրելու տարրերակը<sup>3</sup>:

Հետաքրքիր է, որ այս ամբողջ ընթացքում երկվողմ հարաբերությունները զարգացնելու ուղղությամբ չեխական կողմի քայլերը եղել են ավելի շահագրգիռ ու գործնական, քան հայկական կողմինը: Հնարավոր է՝ այդ հանգամանքը հայկական կողմի համար ուներ բավականին առարկայական պատճառներ, որոնք նշանակալիորեն սահմանափակում էին վերջինիս արտաքին քաղաքական ակտիվությունը: Սակայն չեխական կողմը հետևողականորեն շարունակում էր դիվանագիտական ներկայացուցչություններ փոխանակելու սեփական ուղեգիծը: Չեխական կողմի այս ակտիվությունն ու շահագրգովածությունը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ Չեխիան նույնպես նորանկախ երկիր էր և կարիք ուներ ոչ միայն դիվանագիտական ճանաչման, այլ նաև արդյունավետ միջպետական հարաբերությունների հաստատման ու միջազգային հարաբերությունների համակարգին գործուն ինտեգրման: Իսկ այդ ճանապարհն անցնելու համար հարմար ուղեկից ու գործընկեր կարող էր դառնալ պետականակերտման գրեթե նույն փուլում գտնվող և համանման բարդություններ ունեցող այնպիսի երկիր, ինչպիսին Հայաստանն էր: Հայաստանի հետ դիվանագիտական ներկայացուցչություն փոխանակելու Չեխիայի մտադրությունը հերթական անգամ հաստատվում է Չեխիայի արտաքին գործերի նախարարի տեղակալ Յինեկ Կմոնիչեկի 2000 թ. նոյեմբերի 4-7-ը Հայաստան կատարած աշխատանքային այցի ընթացքում: ՀՅ արտգործնախարարի հետ ունեցած հանդիպման ժամանակ Կմոնիչեկը վերահստատում է, որ իրենք մտադիր են Թբիլիսիում բացել Չեխիայի դեսպանություն, որը թույլ կտա առավել սերտացնելու հայ-չեխական շփումները, իսկ դա կնպաստի համագործակցության առավել շոշափելի արդյունքների ձեռքբերմանը: Ըստ եռթյան, համաձայնելով այս հարցում, ՀՅ արտգործնախարարը չեխական կողմին տեղեկացնում է, որ Ավստրիայում ՀՅ արտակարգ և լիազոր դեսպան Զ. Թարիբյանը հաճատեղության կարգով կստանձնի նաև Չեխիայում և Հունգարիայում ՀՅ արտակարգ և լիազոր դեսպանի պարտականությունները<sup>4</sup>: Սակայն, թեկուզ գուտ այն փաստը, որ ՀՅ դեսպանությունը, որն իր գործառույթներով «ծածկելու» էր նաև Չեխիան, գտնվում էր Վիեննայում, արդեն իսկ դժվարացնում էր երկու երկրների միջև շփումները: Ի դեպ, այդ մասին նույն այցի ընթացքում Կմոնիչեկն իր մտահոգություններն է արտահայտել ՀՅ արդյունաբերության ու առևտուրի նախարարությունում կայացած հանդիպման ժամանակ: Նմանատիպ մեկ փորձ էլ կատարում է ՀՅ-ում

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 87:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղը, գործ 69, թ. 7:

Չեխիայի արտակարգ և լիազոր դեսպան Իրմի Նեկվասիլը 2003 թ. ապրիլի 25-28-ը Երևանում գտնվելու ընթացքում: Նա ՀՀ ԱԳ նախարար Վ. Օսկանյանի հետ ունեցած հանդիպման ժամանակ նշել է, որ «ուշադրության են արժանի ՀՀ քաղաքացիներին Չեխիա մուտքի արտոնագրեր տրամադրելու պայմանները, և Երկրորդ՝ ՀՀ քաղաքացիները ստիպված են դրանք ձևակերպելու համար մեկնել Թրիլիսի, ինչը նիշարք անհարմարություններ է ստեղծում քաղաքացիների համար»<sup>5</sup>: Ըստ այդմ՝ դեսպանն առաջարկել է Երևանում ընտրել 2 կամ 3 կազմակերպություն, որոնք կստանձնեն մուտքի արտոնագրերի ձևակերպման միջնորդությունը: Սակայն այս տարբերակը նույնպես մերժվել է, որովհետև համարվում էր, որ այն չէր կարող լիարժեք լուծում լինել, քանի որ ոչ բոլոր կազմակերպություններն էին անշահախնդիր գործունեություն ծավալում<sup>6</sup>:

Հատկանշական է, որ եթե չեխական կողմը ՀՀ-ում իր դեսպանին նշանակել էր դեռևս 1993 թ., ապա Չեխիայում Հայաստանի դեսպան Ա. Ոսկանյանն իր հավատարմագրերը Երկրի նախագահ Վազլավ Շավելին է հանձնել միայն 1996 թ. մայիսի 21-ին (1996 թ. մարտի 20-ին Հայաստանում Չեխիայի դեսպան էր նշանակվել Լուբոլ Դուբրովսկին)<sup>7</sup>: Այս իրողությունը բացատրել միայն ՀՀ արտաքին քաղաքականությունը որոշակիորեն սահմանափակող առարկայական պատճառներով, ծիշտ չէր լինի, որովհետև նման վերաբերմունքը դրսերվում էր ոչ միայն 1990-ականների սկզբին, այլ նաև 2000-ականների սկզբին ու կրում էր շարունակական բնույթ:

Ուշագրավ է, որ Երկկողմ սահուն հարաբերությունների բացակայությունը ոչ միայն սահմանափակում էր Երկկողմ միջամտական հարաբերություններն ու Երկու ժողովուրդների շփումը, այլև մեծապես վնասում էր տվյալ ժամանակահատվածում առկա և առաջանալիք խնդիրների արդյունավետ և սահուն լուծմանը: Օրինակ՝ շատ կարևոր էին Հայաստանից Չեխիա անօրինական արտագաղթի ու այնտեղ բնակվող հայերի կացության և հայրենիք վերադարձնելու խնդիրները: Ի դեպ, 1990-ականների վերջերին, ոչ պաշտոնական տվյալներով, Չեխիայում գրանցված հայերի թիվը կազմում էր մոտ յոթ հազար (1200 ընտանիք), որոնք իհմնականում ապրում և աշխատում էին առանց քաղաքացիության իրավունքի: Նրանցից միայն հաշված մարդիկ էին ստացել փախստականի կարգավիճակ: Գրանցվածներից բացի, կային նաև մեծ խմբեր, որոնք տուրիստական ուղեգործուվ ժամանում էին Չեխիա, չնչին ժամանակով աշխատանքի անցնում մասնավոր ընկերություններում և հիմնականում մնում այնտեղ, կամ զանազան անօրինական միջոցներով տեղափոխվում էին Եվրոպական այլ Երկրներ<sup>8</sup>: Մասնավորապես, 2003 թ. ապրիլին Երևան ժամանած դեսպան Նեկվասիլը

<sup>5</sup> Նույն տեղում, գ. 25, թ. 13:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղը, գ. 68, թ. 6:

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 7:

շեշտում է, որ Զեխիան բախվում է անօրինական ներգաղթողներին հայրենիք վերադարձնելու խնդրի հետ, քանի որ Հայաստանի և Զեխիայի միջև կնքված չէ տվյալ խնդրով կարգավորող համաձայնագիրը<sup>9</sup>: Ուստի, չեխական կողմն առաջարկում է «Զեխիայի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» պայմանագրի նախագիծ<sup>10</sup>:

Այս պատկերն առավել խոսում է դառնում, եթե հաշվի առնենք այն, որ Զեխիայում չկար առանձնակի համակրանք եկվոր ազգային փոքրանականությունների հանդեպ: Ըստ չեխական «Մենքով» սոցիոլոգիական ընկերության 1995 թ. տվյալների՝ չեխերն իրենց տնտեսական և ընկերային դժվարությունները կապում էին եկվորների առկայության հետ: Այդ կապակցությամբ շեշտվում էր նաև հանցագործության աճը, չնայած դրանց մեծ մասն անառարկելիորեն իրականացնում էին հենց չեխերը<sup>11</sup>:

Այսպիսով, ստեղծված բարդ ու միջապետական համաձայնագրերով չկանոնակարգված դրությունն առավել բարդանում էր տեղում ձևակիրված անհրապույր մթնոլորտի պատճառով: Ղեռև 1995 թ. նոյեմբերին Երևան ժամանած դեսպան Սլանսկին բացառել էր համաքաղաքացիական անձնագրեր ունեցող անձանց համար անձնագրային ռեժիմի վերացման վերաբերյալ հայկական կողմից առաջարկվող համաձայնագրի կնքումը՝ պատճառաբանելով, որ Հայաստանի քաղաքացիներն առաջին տեղն են գրավում ԱՊՀ երկրների ներկայացուցիչների մեջ Զեխիայում քաղաքական ապաստան հայցողների և հանցագործություններ կատարողների շարքում<sup>12</sup>: Ուստի, առավել իրամայական էր դառնում միջապետական պայմանավորվածություններով կանոնակարգել իրավիճակն ու փորձել պաշտպանել հայրենակիցների իրավունքները, շահերն ու հնարավորինս թեթևացնել նրանց խնդիրների լուծումը: Մինչդեռ անընդհատ ձգձգվում ու հետաձգվում էր ՀՀ ԱԳ նախարարի այցը Զեխիա, ինչի պատճառով, բնականաբար, հետաձգվում էին պայմանագրերի ստորագրման ժամկետները: Այս ամենի համատեքստում հետաքրքիր է հնչում Զեխիայի հայ համայնքի իրավերով Ավստրիայում ՀՀ դեսպանության պատվիրակության 1999 թ. փետրվարի 5-6-ը Պրահա կատարած այցի վերաբերյալ հաշվետվության մեջ Հայաստանի և Զեխիայի միջև երկողմանի հարաբերությունների բնութագրումը որպես «սառեցված իրավիճակ»: Բացի այդ, շեշտադրվում է, որ «խիստ կարևոր է վերջապես իրագործել ՀՀ արտգործնախարարի արդեն մի քանի անգամ ծրագրավորված և համա-

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղը, գ. 25, թ. 13:

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղը, թթ. 24-29:

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղը, գ. 223, թ. 42:

<sup>12</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 87:

ձայնեցված, սակայն տարբեր պատճառներով մեր կողմից հետաձգված այցը Զեխիա»<sup>13</sup>:

Ուստի, հարաբերություններում առկա էր որոշակի վակուում և սպասողական վիճակ, ինչը չէր համընկնում ժամանակի և առկա խնդիրների լուծման տրամաբանությանը: Այս առումով բավականին խոսուն ցուցիչ է կայացած այցերի մակարդակն ու բովանդակությունը: Նորանկախ Հայաստանի և Զեխիայի միջև պետական գործիքների այցերն սկսվել են 1994 թ. հուլիսի 28-29-ը Մոսկվայում Զեխիայի դեսպանության խորհրդական Միրոսլավ Բելիցայի մեկօրյա այցով<sup>14</sup>: Այնուհետև երկողմ հարաբերությունների զարգացման հնարավորությունները քննարկելու նպատակով 1995 թ. նոյեմբերի 28-ին պաշտոնական այցով Երևան է ժամանել Հայաստանում Զեխիայի արտակարգ և լիազոր դեսպան Ռուբեն Սլանսկին: Դեսպանին ուղեկցում էին Զեխիայի ԱԳՆ ԱՊՀ և Բալկանյան երկրների վարչության պետի տեղակալ Յոզեֆ Վրաբեցը և դեսպանության առաջին քարտուղար Ռադեկ Մատուլան<sup>15</sup>: Հաջորդ տարում՝ 1996 թ. փետրվարի 29-ին մեկօրյա պաշտոնական այցով Երևան է ժամանում Զեխիայի ԱԳ նախարարի առաջին տեղակալ Ա. Վոնդրան, ում ուղեկցում էին Զեխիայի ԱԳՆ ԱՊՀ երկրների և Բալկանների վարչության պետի տեղակալ Վրաբեցը, փոխնախարարի քարտուղար Մ. Գրեգորովան, Մոսկվայում Զեխիայի դեսպանության առաջին քարտուղար Ռ. Մատուլան<sup>16</sup>: Զեխիական կողմի հաջորդ այցելությունը տեղի է ունեցել 2000 թ., երբ նոյեմբերի 4-7-ը աշխատանքային այցով Հայաստան է ժամանում Զեխիայի ԱԳ նախարարի տեղակալ Յինեկ Կմոնիչեկը՝ իր օգնական Ռոբերտ Յարկովսկու ուղեկցությամբ<sup>17</sup>:

2003 թ. ապրիլի 16-18-ը Հայաստան է ժամանում Զեխիայի բնապահպանության նախարարի գլխավորած պատվիրակությունը<sup>18</sup>: Այցի ընթացքում քննարկվում են այլընտրանքային էներգիայի աղբյուրների նախագծնան և շահագործման ծրագրերում չեխական ֆինանսների նախակցության հնարավորությունը<sup>19</sup>: 2003 թ. ապրիլի 25-28-ը Երևան է ժամանում Հայաստանում Զեխիայի դեսպան Իրժի Նեկվասիլը՝ Հայաստանում կայանալիք չեխական ցուցահանդեսի բացման արարողությանը մասնակցելու համար<sup>20</sup>:

Հայ-չեխական միջպետական հարաբերություններում և հատկապես այդ հարաբերությունների հանդեպ հայկական դիրքորոշման մեջ շրջադարձային իրադարձություն էր ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգա-

<sup>13</sup> Նույն տեղում, գ. 35, թ. 2:

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղը, թթ. 39-41:

<sup>15</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 83:

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղը, գ. 35, թ. 126:

<sup>17</sup> Տե՛ս նույն տեղը, գ. 69, թ. 7:

<sup>18</sup> Տե՛ս նույն տեղը, գ. 35, թ. 9:

<sup>19</sup> Տե՛ս նույն տեղը, գ. 25, թ. 13:

<sup>20</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 12:

րյանի 2003 թ. այցելությունը Զեխիա<sup>21</sup>: Այս այցը կարելի է համարել ՀՀ արտաքին քաղաքական ակտիվացման խորհրդանիշ<sup>22</sup>:

Ինչևէ, փորձելով միջանկյալ ամփոփել Հայաստան-Զեխիա դիվանագիտական հարաբերությունների և դրանց բովանդակության ու մակարդակի վերաբերյալ տվյալները, կարող ենք նշել, որ դրանք ունեցել են բավականին դանդաղ ընթացք և ոչ հագեցած բովանդակություն: Ավելին, այս հարաբերությունների ակտիվացման ու հագեցման ուղղությամբ ավելի ակտիվ ու ջանադիր տպավորություն էին գործում չեխական կողմից քայլերը:

Համենայնդեպս, հայ-չեխական միջպետական հարթության վրա որոշակիորեն շոշափվել ու մասնակի զարգացում են ապրել տարբեր ոլորտներ: Մասնավորապես, 1996 թ. մարտի 1-ին երկու երկրների արտգործնախարարությունների միջև կնքվում է համագործակցության մասին արձանագրություն<sup>23</sup>, որով կողմերը պայմանավորվում են ոչ միայն փոխարքած այցեր, այլև երկկողմ և բազմակողմ ծնաշափերով խորհրդատվություն և տեղեկատվության փոխանակում իրականացնելու մասին: Միաժամանակ պայմանավորվում են աջակցել երկու պետությունների միջև փոխահավետ տնտեսական համագործակցությանը և մշակութի, գիտության ու սպորտի բնագավառներում համագործակցությանը, ինչպես նաև երկու պետությունների միջև հարաբերությունների զարգացմանը նպաստող պայմանագրերի, համաձայնագրերի և աշխատանքային պայմանավորվածությունների կնքմանն ուղղված ջանքերին: Արձանագրությունը ստորագրում են ՀՀ ԱԳ փոխնախարար Վ. Օսկանյանն ու 1996 թ. փետրվարի 29-ին նեկօրյա այցով Երևան ժամանած Զեխիայի ԱԳ առաջին տեղակալ Ա. Վոնդրան<sup>24</sup>:

Հայ-չեխական միջպետական հարաբերությունների շրջանակներում բավականին մեծ ուշադրություն է հատկացվել ներքաղաքական ու արտաքին քաղաքական հարցերի շուրջ փոխանաշելիությանն ու միջյանց արտաքին քաղաքական գերակայությունների և դրանց վերաբերյալ առկա իրողությունների մասին տեղեկատվության փոխանակմանը: Կողմերի միջև, փոխանաշման տեսանկյունից, կարևոր դեր են կատարել տեղի ունեցած այցերը, որոնց ընթացքում կողմերը ոչ միայն միջյանց ներկայացրել են իրենց ներքին քաղաքական ու տնտեսական իրավիճակներն ու զարգացումները, այլ նաև փոխանակել են արտաքին քաղաքական գերակայությունների տեսանկյունից կարևոր կարծիքներ: Մասնավորապես, Միրուսլավ Բոլիցան, երբ 1994 թ. հուլիսի 28-ին ժամանում է Երևան ու հանդիպումներ ունենում տարբեր կուսակցությունների ներկայացուցիչների հետ, հետաքրքրվում է տվյալ

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 45:

<sup>22</sup> Մինչ այս այցը այլ այցեր կամ տեղի չեն ունեցել, կամ դրանց վերաբերյալ հրապարակային փաստաթղթեր չկան ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվում:

<sup>23</sup> Տե՛ս ՀՀ ԱԳՆ, ՊԴԱ, գ. 223, թթ. 111-113:

<sup>24</sup> Տե՛ս նույն տեղը, գ. 223, թ. 128:

կուսակցությունների կառուցվածքով, գործելակերպով ու քաղաքական դիրքորոշումներով: Բացի այդ, Բելիցան այստեղ քննարկումներ է ունենում հանրապետության ներքին քաղաքական գործընթացների, սեփականաշնորհնան, սահմանադրության և գալիք ընտրությունների լուսաբանման հետ կապված հարցերի շուրջ<sup>25</sup>: Կարծիքների հաջորդ ննանատիպ փոխանակումը տեղի է ունենում 1995 թ. նոյեմբերի 28-ին՝ դեպսան Ռ. Սլանսկու երևանյան այցի ժամանակ: Փոխնախագահ Գ. Դարությունյանի հետ ունեցած հանդիպման ժամանակ հյուրը խնդրում է ներկայացնել Հայաստանում իրագործվող տնտեսական ու քաղաքական բարեփոխումների ընթացքն ու դրա հետ կապված դժվարությունները: Իր հերթին դեսպանը ներկայացնում է Զեխիայի տնտեսական ու քաղաքական իրավիճակը<sup>26</sup>: Այնուհետև դեսպանը հանդիպում է ՀՀ վարչապետի հետ և հանգամանորեն ներկայացնում իր երկրի տնտեսական կացությունը<sup>27</sup>:

\*\*\*

Հայ-չեխական հարաբերություններում ու կողմերի ներկայացուցիչների հանդիպումներում առավել մեծ հետաքրքրություն են ներկայացրել միմյանց արտաքին քաղաքական գերակա ուղղությունների և, ընդհանրապես, արտաքին քաղաքականության տեսանկյունից կարևոր հարցերը: ՀՀ արտաքին քաղաքական գերակա խնդիրներից կարևորագույնը՝ Ղարաբաղյան հիմնահարցը, սկզբից ևեր եղել է կողմերի հանդիպումների շրջանակներում քննարկվող հիմնական հարցերից մեկը: Դեռևս 1993 թ. փետրվարի 22-ին Մոսկվայում ՀՀ դեսպան Ֆելիքս Մամիկոնյանն ընդունել է Մոսկվայում Զեխիայի դեսպան Ռուդոլֆ Սլանսկուն և քննարկել Ղարաբաղյան խնդրի շուրջ մի շարք հարցեր: Սլանսկին, իր կարգավորության հանձնարարականով, նախ հայտարարում է, որ «Ղարաբաղյան կոնֆլիկտի կարգավորումը բարդանում է ռազմական գործողություններով, որոնք ընդհատում են խաղաղ գործընթացը»: Ինչին ի պատասխան՝ նրան ներկայացվում է հարցի իրական վիճակը<sup>28</sup>: Այնուհետև դարաբաղյան թեմայի քննարկումը Սլանսկին շարունակում է ՀՀ փոխնախագահ Գ. Դարությունյանի հետ, ով հանգամանորեն ներկայացնում է Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման շուրջ ընթացող բանակցությունների ընթացքը՝ նշելով, որ միջազգային հանրության կողմից անվտանգության երաշխիքներ ստանալուց հետո Լեռնային Ղարաբաղը պատրաստ է գնալ զիջումների: Նա հավելել է նաև, որ «աղբբեջանական կողմն իրատեսորեն չի մոտենում խնդրի կարգավորմանը, ինչն էլ խոչընդոտում է բանակցությունների հաջող ընթացքին»: Ի պատասխան՝ դեսպանը հետաքրքրվում է, թե արդյոք հարավսլավական ճգնաժամի կարգավորման տարբերակով հնարավոր կլինի կարգավորել Ղարաբաղյան հիմնահարցը: Դարությունյանը

<sup>25</sup> Տե՛ս նույն տեղը, թթ. 40-41:

<sup>26</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 83:

<sup>27</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 85:

<sup>28</sup> Տե՛ս նույն տեղը, գ. 223, թ. 5:

պատասխանում է, որ դրա համար անհրաժեշտ է, որ բոլոր կողմերի շահերը համընկնեն: Նա նաև հույս է հայտնում, որ առաջիկայում Բուդապեշտում կայանալիք հանդիպումը կիսթանի կարգավորման գործընթացը<sup>29</sup>: Թեմայի քննարկումը դեսպանը շարունակում է նաև ՀՀ փոխարտգործնախարար է. Զուլոյանի հետ ունեցած հանդիպման ժամանակ: Վերջինս հայտնում է, որ արտաքին ուժերի կողմից որոշ ճնշում է գործադրվում ինչպես Հայաստանի, այնպես էլ Աղրբեջանի վրա, ուստի «շատ բան կախված է Արևելք-Արևմուտք դիմակայությունից: Աղրբեջանը, - հավելում է փոխարտգործնախարարը, - փորձում է շահարկել կասպյան նավթի գործոնը և ապահովել Արևմուտքի աջակցությունը խնդրի կարգավորման գործում: Հայկական կողմը պատրաստ է զիջումներ կատարել, ինչի դիմաց պահանջվում է Լեռնային Ղարաբաղի անվտանգության հստակ երաշխիքներ»<sup>30</sup>:

Ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ առկա իրողություններով հետաքրքրվում է նաև 1996 թ. փետրվարի 29-ին մեկօրյա պաշտոնական այցով Երևան ժամանած Զեխիայի ԱԳ նախարարի առաջին տեղակալ Ա. Վոնդրան՝ ՀՀ փոխարտգործնախարար Վ. Օսկանյանի հետ ունեցած հանդիպման ժամանակ: Այսուեղ ՀՀ փոխարտգործնախարարը բարձր է գնահատում Զեխիայի ակտիվ մասնակցությունը Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը. Զեխիան 1992 թ. նախագահում էր ԵԱՀՍ-ում և ակտիվ համագործակցում Մինսկի խմբի աշխատանքներին՝ լինելով նրա հիմնադիրներից մեկը: Այնուհետև Օսկանյանը նշում է, որ վերջին երկու տարիներին խնդրի կարգավորման մեջ առաջընթաց չի արձանագրվել և հույս է հայտնում, որ Ոտևաստանի ղեկավարության նախաձեռնած մաքոքային դիվանագիտությունը չի խանգարի Մինսկի խմբի աշխատանքներիմ<sup>31</sup>: Իր հերթին Վոնդրան փաստում է, որ չնայած Զեխիան դուրս է եկել Մինսկի խմբից, սակայն չի կորցրել իր հետաքրքրությունը հիմնախնդրի կարգավորման նկատմամբ: Այնուհետև Վոնդրան հետաքրքրվում է այն հարցով, թե արդյո՞ք ԼՂ կարգավորման խնդրում Բելգրադ-Պալե առանցքային ճնշման տարբերակը կիրառելի է Երևան-Ստեփանակերտ հարաբերություններում: Վ. Օսկանյանը պատասխանում է, որ թեև «կարևորագույն հարցերում ՀՀ նախագահը կարող է ճնշում գործադրել ԼՂ իշխանությունների վրա, սակայն հայտնի չէ, թե ինչպիսին կլինի այդ դեպքում արձագանքը»: Բացի այդ, Վոնդրային հետաքրքրում է նաև խաղաղարար ուժերի նախատեսված քանակը, ինչին ի պատասխան Վ. Օսկանյանը ասում է, որ այդ թիվը պայմանավորված է քաղաքական համաձայնագրի «ամրությամբ»<sup>32</sup>: Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման հարցը Վոնդրան քննարկում է նաև ինչպես ՀՀ վարչապետի, այնպես էլ ՀՀ պաշտպանության փոխնախարար Վ. Շիրսանյանի հետ ունեցած հանդիպումների

<sup>29</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 84:

<sup>30</sup> Նույն տեղում, թ. 86:

<sup>31</sup> Տե՛ս նույն տեղը, թթ. 126-127:

<sup>32</sup> Տե՛ս նույն տեղը, գ. 223, թ. 128:

ժամանակ: Զեխս պաշտոնյան հետաքրքրվում է հատկապես Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման հնարավոր տարբերակներով, խաղաղապահ ուժերի տեղակայման հնարավորություններով՝ նկատելով, որ Զեխիան կարող է մեկ գումարտակով իր մասնակցությունը բերել ԵԱՀԿ խաղաղարար առաքելությանը: Խաղաղարար ուժերի տեղակայումը ՀՀ պաշտպանության փոխնախարարը գնահատում է որպես հիմնահարցի լուծմանն օժանդակող որոշում: Սակայն նա մտահոգություն է հայտնում դրա իրագործման խնդրում առկա որոշ նրբությունների շուրջ: Յայկական կողմը մասնավորապես անհանգստացած էր, որ խաղաղարար ուժերի ռազմակայանը նախատեսվում էր տեղակայել երգրումում, իսկ այդ դեպքում միջոցառումը կարող էր խափանվել Թուրքիայի չափազանց կողմնակալ դիրքորոշմանք: Ի հաստատումն ասվածի Վ. Շիրխանյանը նշում է, որ տվյալ պահին Նախարարությունը Ադրբեյջան օրական ուղարկվում է բուրգական գենքով բեռնված 40-42 ինքնաթիռ: Ինչ վերաբերում է խաղաղարար ուժերի քանակին, ապա, ՀՀ փոխնախարարի կարծիքով, եթե հիմնախնդրի կարգավորումը հանգեցվի տարածքների վերադարձմանը և ԼՂ նախկին կարգավիճակի վերականգնմանը, ապա 3000 զինվորից բաղկացած գորախումբը բավարար չի լինի ապահովելու Ղարաբաղի բնակչության անվտանգությունը: Յիմնախնդրի կարգավորման համատեքստում Վոնդրան որպես օրինակ հիշատակում է Զեխիայի և Սլովակիայի միջև երկու գյուղերի փոխանակման փորձը<sup>33</sup>:

Այնուհետև ԼՂ հիմնահարցի կարգավորման հնարավորությունների ու հեռանկարների վերաբերյալ Երևանում քննարկումներ է ունենում 2000 թ. նոյեմբերի 4-7-ը աշխատանքային այցով Յայաստանում գտնվող Զեխիայի փոխարտգործնախարար Յ. Կմոնիչեկը: Վերջինս ՀՀ նախագահի խորհրդական Ա. Ղարությունյանի հետ ունեցած հանդիպման ժամանակ տեղեկացնում է, որ իր երկիրն ուշադրությանը հետևում է Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացին և իրազեկ է Քոչարյան-Ալիև հանդիպումներին: Ղարությունյանը ներկայացնում է խնդրի կարգավորման վերաբերյալ ՀՀ դիրքորոշումը, առկա վիճակը, ինչպես նաև շեշտում Յայաստանի և Ադրբեյջանի նախագահների հանդիպումներն առավել ինտենսիվացնելու կարևորությունը: Ղարությունյանը նաև նշում է, որ նման իրավիճակներում միջազգային հանրության չափից ավելի միջամտությունը միշտ չէ, որ կարող է տալ դրական արդյունք: Յակամարտության կողմերի միջև որևէ հանաձայնության դեպքում միայն հնարավոր կլինի միջազգային միջնորդների գործունեության ծավալումը: Ղարությունյանը շեշտում է այն հանգամանքը, որ ԱՄՆ-ը, Ռուսաստանը և Ֆրանսիան միաննան մոտեցում են ցուցաբերում խնդրի կարգավորման հիմնական ուղիների հարցում<sup>34</sup>:

<sup>33</sup> Տե՛ս նույն տեղը, թթ. 130-131:

<sup>34</sup> Տե՛ս նույն տեղը, գ. 69, թ. 9:

Ներկայացնելով Կոսովոյի խնդրի համատեքստում Բալկանյան տարածաշրջանում իրականացվող քաղաքականությունը, Կմոնիչեկը շեշտում է, որ, չնայած իր երկիրը ՆԱՏՕ-ի անդամ է, բայց և պես, Չեխիան Հունաստանի հետ համատեղ ձգտում է Սերբիային վերադարձնել նրա պատմական դերակատարությունը<sup>35</sup>:

Այստեղ կարելի է որոշակի անհամատեղելիություն տեսնել Ղարաբախյան հարցի և համանման իրավիճակների վերաբերյալ հայկական և չեխական կողմերի դիրքորոշումներում: Ա. Յարությունյանին Կմոնիչեկը հարցնում է, թե իիմնախնդրի խաղաղ կարգավորմանը խոչընդոտող ի՞նչ խնդիրներ կան: Նախագահի խորհրդականը պատասխանում է, որ Երկու նախագահների միջև ուղիղ շփումները տալիս են իրենց դրական արդյունքները. «Արդեն վեց տարի, - նշում է նա, - դադարեցված են ռազմական գործողությունները, ինչը մեծ ծեռքբերում է: Բացի այդ, Յայաստանի նպատակը հարցի արագ լուծումը չէ, այլ այն, որ հակամարտությունը հանգանանորեն լուծվի՝ հետագայում նոր խնդիրներից խուսափելու համար»<sup>36</sup>: Փոխնախարարը հարցնում է՝ միջազգային հանրությունը բավարար հետաքրքրություն ցուցաբերում է այս հարցին և ի՞նչ դիրքորոշում ունեն ԱՄՆ-ը, Ռուսաստանը և Ֆրանսիան, և արդյոք նրանց դիրքորոշումները միշտ են համընկնում: Յարությունյանն ընդգծում է, որ ոչ միշտ է միջազգային հանրության չափից ավելի հետաքրքրվածությունը դրական արդյունքներ տալիս: Յուրաքանչյուր պատերազմ ունի իր առանձնահատկությունները, և չի կարելի բոլորը դիտարկել նույն լույսի ներքո: Յակամարտության կողմերի միջև որոշակի պայմանավորվածության ծեռքբերումից հետո միայն միջազգային հանրությունը պետք է դառնա դրա երաշխավորը: Եվ որպես միջազգային հանրության չափից ավելի հետաքրքրության դրսևորում բերում է Բալկանների օրինակը: Իսկ միջնորդ երկրների դիրքորոշման կապակցությամբ նշում է, որ նրանք այս դեպքում ունեն միատեսակ մոտեցում և, անկախ ժամանակ առ ժամանակ այս կամ այն կողմի ակտիվացումից, բոլորն էլ արդյունավետ են աշխատում<sup>37</sup>:

Յանդիպումների ժամանակ, բացի այս իիմնախնդրից, չեխական կողմը բավականին մեծ ուշադրություն է դարձրել նաև Յայաստանի ու հարևան երկրների, ինչպես նաև Յայաստանի ու Ռուսաստանի միջև առկա հարաբերություններին: Նախ Բելիցան 1994 թ. իր այցի ժամանակ ՀՀ ԱԳՆ ԱՊՀ երկրների վարչությունում բաժնի վարիչ Գ. Վարդանյանի հետ ունեցած գրույցի ընթացքում հետաքրքրվում է հայ-ռուսական հարաբերությունների առկա ընթացքով և ԱՊՀ շրջանակներում ինտեգրացման գործընթացների նկատմամբ Յայաստանի դիրքորոշմամբ<sup>38</sup>:

<sup>35</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>36</sup> Նույն տեղում, թ. 26:

<sup>37</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 27:

<sup>38</sup> Տե՛ս նույն տեղը, գ. 223, թթ. 39-40:

Չեխիան, իր հերթին, Հայաստանի համար որոշակի հետաքրքրություն կարող էր ներկայացնել, քանի որ անցումային փուլում գտնվող գործեր համադրելի երկիր էր, որը Վիշեգրադյան մյուս երկրների հետ վիճարկում էր Եվրամիության անդամ դառնալու առաջնությունը՝ իր արտաքին քաղաքականությունը լիովին ենթարկելով Եվրակառույցներին ինտեգրվելու խնդրին: Տվյալ պահին Չեխիայի կառավարությունը բարեփոխումներ էր իրականացնում երկրի օրենսդրական, տնտեսական, սոցիալական ապահովման և ռազմարդյունաբերական համակարգերն արևմտաԵվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ<sup>39</sup>: Այս ուղեգիծն ու դրա իրականացնան ճանապարհին Չեխիայի կուտակած փորձը կարող էին կիրառելի լինել նաև Հայաստանի համար: Սակայն սրան կարող էր խոչընդոտել պաշտոնական Մուկվայի հակազդեցությունը, ինչը կար նաև դեպի ՆԱՏՕ և Եվրակառույցներ Չեխիայի ձգտման ճանապարհին<sup>40</sup>: Ուստի պատահական չեր, որ յուրաքանչյուր հանդիպման ժամանակ չեխական կողմն անպայման հետաքրքրվում էր Ռուսաստանին վերաբերող հարցերով: Նույնն ենք տեսնում նաև 1995 թ. Ռուսության Սլավոնի Երևան կատարած այցի ժամանակ ՀՀ փոխնախագահ Գ. Քարությունյանի հետ ունեցած հանդիպման ընթացքում, որտեղ դեսպանը հետաքրքրվում է տարածաշրջանում Ռուսաստանի վարած քաղաքականությամբ: Գ. Քարությունյանը կարևորում է Հայաստան-Ռուսաստան հարաբերությունները՝ նշելով: «Ռուսաստան իր շահերն ունի տարածաշրջանում և անհեթեթություն կլինի հաշվի չառնել այդ հանգամանքը: Մենք ձգտում ենք լավ հարաբերություններ պահպանել նրա հետ»: Ապա Քարությունյանն անհանգստություն է հայտնում, որ Ռուսաստանում մոտակա խորհրդարանական ու նախագահական ընտրությունները կարող են որոշ դժվարություններ առաջացնել Երկու երկրների հարաբերություններում: «Բոլոր դեպքերում Հայաստանում իրագործվող բարեփոխումներն անդառնալի բնույթ են կրում»<sup>41</sup>, - եզրակացնում է Գ. Քարությունյանը:

Հարցի քննարկումը շարունակվում է ՀՀ փոխարտգործնախարար Զոլոյանի հետ Սլավոնի ունեցած հանդիպման ժամանակ, որտեղ, վերջինիս հարցին ի պատասխան, Զոլոյանը նշում է, որ Հայաստանը չի ողջունում ՆԱՏՕ-ի ընդլայնման ծրագրին հակազդելու նպատակով նախկին հարևան երկրների հետ նոր ռազմաքաղաքական դաշինք ստեղծելու վերաբերյալ Ռուսաստանի նախաձեռնությունը, քանզի Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքը թույլ չի տալիս հարելու որևէ ռազմական դաշինքի<sup>42</sup>:

1996 թ. Չեխիայի փոխարտգործնախարար Վոնդրան Երևանում ՀՀ փոխարտգործնախարար Վ. Օսկանյանի հետ հանդիպման ժամանակ անդրադանում է Հայաստանի և իր հարևանների միջև առկա հա-

<sup>39</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 79:

<sup>40</sup> Տե՛ս նույն տեղը, թթ. 83-84:

<sup>41</sup> Նույն տեղում, թ. 84:

<sup>42</sup> Տե՛ս նույն տեղը, գ. 223, թ. 86:

րաբերություններին: Հայաստան – Թուրքիա հարաբերությունների առումով Վ. Օսկանյանը նշում է, որ Թուրքիան Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու հնարավորությունն ուղղակիորեն կապում է Ղարաբաղյան հարցի կարգավորման հետ, բացի այդ, Հայաստանից պահանջում է իրավականորեն ամրագրել տարածքային պահանջների բացակայությունը: «Հայկական կողմը, - հավելում է ՀՀ փոխարտօրդնախարարը, - բազմիցս հայտարարել է, որ ընդունում է Թուրքիայի տարածքային ամբողջականությունը, սակայն նրանք չեն բավարարվում այդ հայտարարություններով»<sup>43</sup>:

Ինչ վերաբերում է Իրանի հետ ՀՀ ունեցած հարաբերություններին, ապա Վ. Օսկանյանը հավաստում է, որ Ղարաբաղի հարցի կապակցությամբ Իրանի մոտեցումները միանգամայն տարբերվում են Թուրքիայի մոտեցումներից, ուստի Ղարաբաղյան հարցը չի ազդում երկու երկրների միջև առկա համագործակցության վրա: Այնուհետև, Վ. Օսկանյանը, կարևորելով Հայաստանի ու Վրաստանի միջև բարիդրացիական հարաբերությունների զարգացումը, նշում է, որ «Հայաստանը սնուցող գազամուղի պայքարուները Վրաստանում բնակվող ադրբեջանցիների կողմից դադարեցվեցին միայն Ադրբեջանի վրա ԵԱՀԿ-ի ճնշումից հետո»<sup>44</sup>:

Ի վերջո, Ուսւաստանի հետ հարաբերությունների առնչությամբ ՀՀ փոխարտօրդնախարարը նկատում է, որ դրանք այլևս չեն բնութագրվում որպես կենտրոն-ծայրագավառ, այլ հիմնված են փոխշահավետ և հավասար գործընկերության վրա, ինչի վառ ապացույց է այն փաստը, որ Հայաստանը չմիացավ Մաքսային միություն ստեղծելու Ուսւաստանի նախաձեռնությանը<sup>45</sup>:

Նույն այցի շրջանակներում ՀՀ վարչապետ Յ. Բագրատյանի հետ ունեցած հանդիպման ժամանակ Վոնդրան կարծիք է հայտնում, որ Հայաստանը և Թուրքիան պետք է կանոնավորեն իրենց հարաբերությունները, ինչպես դա փորձում են անել Զեխիան ու Գերմանիան, որոնք լուրջ տարածայնություններ ունեն Սուլեյտական հիմնահարցի առնչությամբ<sup>46</sup>: Վոնդրան նշում է, սակայն, որ Զեխիան ներողություն է

<sup>43</sup> Նույն տեղում, թ. 127:

<sup>44</sup> Նույն տեղում, թ. 123:

<sup>45</sup> Տե՛ս նույն տեղը, թթ. 127-128:

<sup>46</sup> Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո, տասնամյակներ անց գերմանա-չեխական հարաբերությունները շարունակում էին կրել ողբերգական էժեր պարունակող համատեղ պատմության կնիքը: Այդ հարաբերությունները մթագնված էին անցյալի ստվերով: Ընդ որում, երկու կողմերն էլ տևական ժամանակ գերադասում էին լոել այդ խնդրի մասին, սակայն աշխարհաքաղաքական նոր հարաբերությունները վերակենդանացրին Սուլեյտական հիմնահարցը, որը որոշակի սպառնալիք էր բովանդակում չեխ-գերմանական հարաբերությունների համար:

Այս հիմնախնդրի նախապատճերյան ակունքները հասնում են Զեխոսլովակիայի այն ժամանակվա նախագահ Բենեշի դեկրետին, որն արժանացել է Պոտսդամի կոնֆերանսի հավանությանը, և ըստ այդմ՝ Երկրորդ աշխարհամարտի ավարտից շատ չանցած սկսվեց սուլեյտական գերմանացիների զանգվածային արտաքսումը

խնդրել Գերմանիայից Երկրորդ աշխարհամարտից հետո Զեխիայում բնակվող գերմանացիների արտաքսման համար, իսկ Գերմանիան այժմ պահանջում է նյութական փոխառուցում: Ուստի նրան հետաքրքրում է այն հարցը, թե արդյո՞ք հայերից Թուրքիայի ներողություն խնդրելու դեպքում Հայաստանը չի բարձրացնի այլ բնույթի հարցեր, օրինակ՝ նյութական փոխառուցում, պատմական հողերի վերադարձ: ՀՀ վարչապետը պատասխանում է, որ Հայաստանը Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջներ չունի և միայն ցեղասպանության փաստի ընդունումն արդեն իսկ կարող է զգալիորեն բարելավել երկողմ հարաբերությունները<sup>47</sup>:

Դժվար չէ տեսնել, որ Զեխիայի մոտեցումը ինչպես ԼՂ հիմնախնդրի հանգուցալուծնան, այնպես էլ Հայոց ցեղասպանության միջազգայնորեն ճանաչման հարցում որոշակիորեն տարբերվում էր հայկական կողմի ունեցած դիրքորոշումից: Դա մեկ անգամ ևս հաստատում է այն իրողությունը, որ կողմերին անհրաժեշտ էր ավելի սերտ հարաբերություններ կառուցել՝ տեսակետների որոշակի տարբերությունների հետագա խորացումներից խուսափելու համար:

Այսպիսով, Հայաստան-Զեխիա միջապետական հարաբերությունների հաստատման և զարգացման ընթացքի ուսումնասիրությունը փաս-

---

Զեխոսլովակիայից, ինչն ուղեկցվում էր աննարդկային արարքներով՝ ի պատասխան նացիստական արհավիրքների: Արդյունքում, ըստ տարբեր աղբյուրների, 1945-46 թթ. Սուլետական մարզից տեղահանվել են 2,1 - 3 միլիոն գերմանացիներ, իսկ սպանվածների ու անհայտ կորածների թիվը հասել է 250,000-ի: 1973 թ. ԳՖՇ-ի և ՉՍՍՇ-ի միջև կնքվում է այսպես կոչված «Նորմալացման համաձայնագիր», որն էլ հիմք է դնում դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը: Դրանով արևմտագերմանական իշխանությունները լիովին չանտեսեցին Սուլետական հիմնահարցը՝ հայտարարելով, որ սուլետյան հայրենակիցների նկատմամբ հովանավորությունը շարունակում է մնալ իրենց պարտականությունը: «Սառը» պատերազմի տարիներին լուրյան մատնված Սուլետական հիմնահարցը քաղաքական քննարկումների նյութ դարձավ Զեխոսլովակիայում «քավշյա հեղափոխությունից» և Գերմանիայի վերամիավորումից հետո: Հարցի արդիականացման համար զգալի դեռ է խաղաց Զեխոսլովակիայի, իսկ 1993 թ. հունվարի 1-ից՝ նրա իրավահաջորդ Զեխիայի Հանրապետության նախագահ Վ. Հավելի հայտարարությունը, թե չեխերը պետք է ընդունեն գերմանացիների նկատմամբ գործած իրենց մեղքը:

Գերմանիայի հետ տնտեսական կապերի խորացումը չեխսական կառավարությունը համարում է երկրի տնտեսական բարեփոխումներին ուղղված արտասահմանյան օգնության մի մասը, իսկ ավելի թերահավատները նախազգուշացնում են չեխսական տնտեսության «գերմանիզացման» վասնգի մասին:

Սուլետական հիմնահարցի նկատմամբ չեխերի դիրքորոշումն այն է, որ եսպատերազմյան տարիներին տեղի է ունեցել դաշնակից պետությունների որոշմամբ օրինական ակտ՝ գերմանացիների տեղահանում, որը նացիստական Գերմանիայի կողմից սանձազերծված Երկրորդ աշխարհամարտի հետևանքն էր: Ավելին, Զեխիան իր հերթին բարձրաձայնում է նացիզմի զոհերի նյութական ու բարոյական վնասների փոխառուցման մասին: Փոխադարձ պահանջների բավարարման արդյունքում Զեխիան կզրկվեր իր տարածքի մեկ երրորդից, իսկ գերմանական կառավարության ռեպարացիաները աստղաբաշխական թվերի կիասնեին (տես ՀՀ ԱԳՆ, ՊԴԱ, գ. 223, թթ. 167-169):

<sup>47</sup> Տես նույն տեղը, գ. 223, թթ. 130-131:

տում է, որ սկզբնապես դրանք չեն ունեցել անհրաժեշտ հագեցվածություն և բովանդակություն: Այդ հանգամանքը պայմանավորված էր Հայաստանի անկախացման շրջանում առաջացած մարտահրավերներով ու դժվարություններով, որոնք զգալիորեն սահմանափակում էին ՀՀ իշխանությունների արտաքին քաղաքական ակտիվությունը: Բացի այդ, Խորհրդային Միության փլուզումից հետո ձևավորված աշխարհաքաղաքական իրողությունը, ընթացող զարգացումները և դրանց վերաբերյալ Ռուսաստանի պաշտոնական դիրքորոշումը կաշկանդում էին ՀՀ արտաքին քաղաքականության ձևավորվող ուղղություններն ու դրանց ակտիվությունը: Մյուս կողմից, Հայաստանն ու Չեխիան ունեին տարբեր մոտեցումներ և դիրքորոշումներ արտաքին քաղաքական համանան որոշ խնդիրների վերաբերյալ: Սակայն այդ հանգամանքը չէր կարողանա արգելակել կողմերի մերձեցումը, եթե կողմերի դիրքորոշումները բխեին սեփական ազգային շահերից և հետևողականորեն իրականացվեին: Ավելին, տվյալ իրավիճակում հայկական կողմը պետք է դրսերեր ավելի շրջահայաց և ճկուն մոտեցում՝ միջազգային հանրության և վերջինիս առանձին անդամների մոտ Հայաստանի արտաքին քաղաքական գերակայությունների լուծումն ու դրանց վերաբերյալ պաշտոնական երևանի մոտեցումներն առավել ընկալելի դարձնելու համար: Համապատասխան կամքի բացակայության կամ այդ կամքի իրագործման ուղղությամբ ոչ բավարար ջանքերի գործադրության հետևանքը ոչ միայն երկկողմ հարաբերություններում առկա որոշակի դանդաղաշարժությունն էր, այլ նաև Չեխիայում հայկական համայնքի և երկու երկրների միջև ժողովրդական շփման դժվարությունները:

Այսպիսով, հայ-չեխական միջային հարաբերությունները շհատեցին կառուցվածքային զարգացման և բովանդակային հագեցման ցանկալի սահմանը: Սակայն դրանք ունեցան որոշակի զարգացում, ինչը կարող է լավ հիմք դառնալ՝ հետագա զարգացումների ու ավելի ընդգրկուն և համապարփակ փոխհարաբերություններ կառուցելու համար: Ուստի, հաշվի առնելով առկա դասերը, պետք է փորձել լրացնել բացը և հարաբերությունների հետագա զարգացման տրամաբանությունը կառուցել ավելի արդյունավետ հարաբերությունների զարգացման տեսլականով: Բացի այդ, պետք է հարաբերություններ հիմնել ոչ թե առկա վերաբերմունքը հիմք ընդունելով, այլ հենց գործուն հարաբերությունների զարգացումը թույլ կտա փոխելու առկա վերաբերմունքը:

**ГРИГОР ГРИГОРЯН – Фактор внешнеполитических приоритетов в армяно-чешских межгосударственных отношениях.** – В статье рассматриваются некоторые вопросы, связанные с установлением дипломатических отношений между Арменией и Чехией и развитием их связей. При схожести государственного строительства, происходящего в обеих

странах, а также внешнеполитических вызовов и стоящих перед обеими целей нельзя сказать, что отношения между ними развиваются сколько-нибудь активно. Тому имеется ряд объективных и субъективных причин, накладывающих отпечаток как на формирование, так и на степень межгосударственных отношений.

**GRIGOR GRIGORYAN – *The Factor of Foreign Policy Priorities in the Armenian-Czech Interstate Relations.*** – Some questions referring to the establishment of diplomatic relations between Armenia and the Czech Republic and the development of interstate relations are being discussed in this article. The relations between these two countries have not developed as actively despite the similarity of the state-building process that they were in and the foreign policy challenges and goals they were to face. It had some objective and subjective reasons which have influenced the process of formation and the level of interstate relations. These reasons are also being analyzed in this article.